թեամբ մը ձեռքն առնելով բացա-տարէն ու մէջին ուտելէն ետքը՝ պատեանին մէկը մէկուն, միւսը մէկալին տուաւ ։ Աս առակը մտքերնիդ պահեցէք․ և ասով թերեւս շատ ծախքերու մտմտուքներէ ազատ կ՚ըլլաք ։ Դարձեալ մտքերնիդ լաւ դրէք որ մարդուս իր իրաւունքները տալու լաւագոյն կերպը ուրիշներուն իրաւունքը յարգել ու մեծարելն է ։

---

## ԺԱՄԱՆԱԿԱ ԳՐԱԿԱՆՔ

Մասիս պատուական լրագրոյ մէջ հետեւեալ տողերը կը կարդանք ։

Պատրիարքարանէն հետեւեալը կը հաղորդուի մեզ ։

«Անգլիոյ Վսեմ. դեսպանին կողմէ 'ի պաշտօնէ Թարգմանն այս շաբաթ օր Պատրիարքարան գալով՝ յայտնեց թէ Սահակ եպիսկոպոսը իւր ընկերներովը Կոնտառ կը գտնուի, ուսկից Մասուայի հիւպատոս Պ. Մինդլին-Ճէրիին լուրը կը ղրկէ թէ վերադառնալ կուզէ և թէ ստակ չունի. Մասուայի հիւպատոսն ալ Գահիրէի հիւպատոս Պ. Սթանթօնին կը գրէ այս լուրը և նա ալ Լոնտրա Լորտ Սթանլիի և մայրաքաղաքիս դեսպանին կը հաղորդէ ։

«Նոր վրայ Լորտ Սթանլի կը հեռագրէ հոն որ հայ նուիրակաց անկորուստ վերադարձին համար ստակ և ուրիշ ինչ որ պէտք է՝ անյապաղ տրուի ։

«Արդարեւ Պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց Լորտ Սթանլիի այս մարդասիրական զգացմանց համար ։

11 Նոյեմբեր 1868
Ի Պատրիարքարանի հայոց
Կ. Պօլսոյ

---

—Ամսոյս 16ին Քաղաքիս մէջ շքեղ լուսավառութիւն եղաւ ի պատիւ տարեդարձի ծննդեանն Ն. Օգոստափառութեան Սուլթան Ապտիւլ-Ազիզ բարեխնամ կայսեր ։ Այն առթիւ ժառանգաւորաց դպրոցի յառաջադէմ աշակերտներէն Արաբկերցի աւագ սարկաւագ տիրացու Կարապետը հետեւեալ երգը յօրինած էր Վսեմ. Կառավարչին նուիրելու, որ ըստ սովորութեան այսպիսի հանդէսներու ժամանակ գլխաւոր ազգաց վանքերը իւր այցելութեամբը կը պատուէ․ ի խրախոյս Աւագ սարկաւագին և ընկերակցացը հանդիսիս միջոցաւ կը հրատարակեմք երգը։

### ԹԷՀՆԻԷԹ-Ի ՎԻԼԱՏԷԹ Ապտիւլ-Ազիզ
Ճիհանտարայ Էֆէնտիմիզէ ։

Էյ միլլէթ Օսմանեան, տէր վէ-
թանի Պուսաի Ազիզ
Էլէօվմ մ'ալում օլտուն սիզէ մա՛ սէ-
տայի պիւլէնտանիզ․
Էմրուզ սահիհ օլմուշ մէվլուտ Ճի-
հանտարայ Էֆէնտիմիզ
Փէրթէվֆէզայ վէրիւպ նամի իլէ Սուլ-
թան Ապտ-իւլ-Ազիզ ։
Խալք ճիւմլէ զահիր զուվար վա-
ճիպէ տիր պիմիննէթիմիզ
ուլու եզտան հաքք թէալէ իւրէք
խալիս իլէ թէմիզ
Ըրֆայի տէսլիմ էթմէք պու լէյլ քի ճէլ-
լուշան Պատիշահիմիզ
Էթսիւն Թօմիլ էօմրիւ շահն Սուլ-
թանի Ապտ-իւլ-Ազիզ ։
Հէմտէ Թահթի անըն պազու-
վիւքալէսի ու ճէնկավիզ
Քիւլլի էօվմին մատուն սիւրուր իչին-
տէ էյ Նարատիմիզ
սազլա․ վէ հէմ անլէր իլէ Նալիֆ փա-
շայ Էֆէնտիմիզ

քի այլէի քեօշկեանում օրուի տօնի տօնախմբելով ։

Կարապետ Շէմմս Արաբեան ·
Բեզէժիւ գեղջականի Մուշ.
Եագուպ ։

---

—17 · Յիմնակաց բարեկենդանի օրը սրբոց Յակովբեանց տաճարին մէջ ձեռնադրութեան հանդէս մի կատարուեցաւ · ուր ներկայ էին ոչ միայն ջերմեռանդ ուխտաւորք և քաղաքաբնակ ժողովուրդք այլ և զանազան ազգերու հոգեւորականք · Ինչպէս Նոր Ալեմանիոյ ՄԵԾ. Հիւպատոս Հայոնէր Տ. Գեատրիանը ։ Ամեն. Սրբազան Հայրը սուրբ պատարագ մատուցանելով Քահանայութեան սրբազան պաշտօնը շնորհեց ութն սարկաւագաց, և սարկաւագութեան աստիճան ժառանգաւորաց յառաջադէմ աշակերտներէն երկուսին որք են ։

Սարկաւագ Գօզոս Գօլէցի որ կոչեցաւ Տէր Աբրահամ.
» Բարսեղ Բաղիշեցի » Անդրէաս
» Կարապետ Գօլուցի » Անանիա
» Գէորգ Օմիւռնացի » Եղեկիէլ
» Գաբրիէլ Վանեցի » Եղիա
» Միքայէլ Վանեցի » Յակոբոս
» Յարութիւն Գօլէցի » Մովսէս
» Աւետան Կէյվեցի » Կիւրեղ
Իսկ սարկաւագունք դպիր Գէորգ Եդեսացի ·
» Կարապետ Տիգրանակերտցի, որ կոչեցաւ Միլոնիչ ·

Օծման սրբալոյս հանդէսը կատարելէն յետոյ Սրբազան Հայրը ազդու ատենաբանութեամբ յայտնեց Նուիրելոց քահանայական սրբազան աստիճանի և կոչման մեծութեանը փառքն ու պատիւը, և իրենց ունենալիք պարտքերնին առ Աստուած՝ առ Ազգն առ տէրութիւնը և առ սուրբ Աթոռս · և բոլոր ժողովուրդը օրհնելով կատարեց պատարագի սրբազան խորհուրդը ։

Յոյս մեծ ունիմք նորոգ նուիրելոց վրայ · որ անձնուէր աշխատութեամբ պիտի գործեն լրացուցանելու Ամեն. հոգեւոր Հօր իղձն ու փափաքը յօգուտ ազգիս և ի պատիւ սրբոյ Աթոռոյս ։

—Ս. Քաղաքիս Յունաց վանքին Առաջնորդ Գեր. Տ. Անթիմ Ծ. վարդապետը իւր երկամսեայ Ռուսերէն երկու հատոր փառակազմ քարոզագիրքը նուիրեց սուրբ Աթոռոյս Թանգարանին, որոյ մասին մեր շնորհակալութիւն հրապարակաւ կը յայտնեմք Նորին Գերապատուութեան ։

—Անցեալ վերջերը Ս. Քաղաքիս Լատինաց Պատրիարք Մօնսինեօր Իւսէֆ Վալերկայի կողմանէ ներկայացան Ամեն. Սրբազան Հօր · Ն. Սրբազնութեան ներքին քարտուղարը, և վարդապետ մի · և մատուցին Ս. Պապի կողմանէ եկող տարուան ըլլալիք ժողովին հրաւիրագիրը ։ Սրբազան Հայրը ընդունեց գիրը ըսելով կ'ընդունիմ այս իբրեւ շրջաբերական մի, որոյ Թարգմանութիւնը արդէն լրագրաց մէջ կարդացած եմ, բայց պատասխանը Սրբազան Պապը ընդհանրական կաթուղիկոսէն կ'ընդունի · և աւելի աղէկ պիտի ընէք Ս. Հայրը եթէ յառաջագոյն Վեհ. կաթուղիկոսի հետ թղթակցէք, և այս մասին Ն. Վեհափառութեան կարծիքն առնէք, ապա այս հրաւիրագրերը մեզ խրկէք և այլն ։